ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 սեպտեմբերի 2023 թվականի N 1529 - Ա

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՆՏՐՈՆ (WORLD TRADE CENTER (WTC) ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՆՏՐՈՆ ԵՐԵՎԱՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆԸ ՄԱՄՆԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով և 2-րդ մասով և «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 9-12-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հավանություն տալ «Ռենշին» ՍՊԸ-ի (այսուհետ՝ ներդրող) կողմից ներկայացված՝ Համաշխարհային առևտրի կենտրոն (World Trade Center (WTC) կառուցելու քաղաքաշինական կառուցապատման ծրագրին, հաստատելով ծրագրի հիմնական պայմանները՝ համաձայն հավելվածի:

2. Լիազորել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը հավելվածով նախատեսված պայմանների կենսագործումն ապահովելու նպատակով ներդրողի հետ կնքել համապատասխան պայմանագիր:

3. Լիազորել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը մասնակցել «Ռենշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և «Հայփոստ» ՓԲԸ-ի հետ համատեղ «Համաշխարհային առևտրի կենտրոն Երևան» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ ընկերություն) հիմնադրմանը՝ հետևյալ հիմնական պայմաններով՝

1) ընկերության կանոնադրական կապիտալը կկազմի 21 898 520 000 (քսանմեկ միլիարդ ութ հարյուր իննսունութ միլիոն հինգ հարյուր քսան հազար) դրամ, որից 10 949 260 000 (տասը միլիարդ ինը հարյուր քառասունինը միլիոն երկու հարյուր վաթսուն հազար) դրամ ներդրումը կկատարի ներդրողը՝ դրամական միջոցների տեսքով, իսկ Հայաստանի Հանրապետությունը և «Հայփոստ» ՓԲԸ-ն իրենց ներդրումը կկատարեն Սարյան 22 հասցեում գտնվող շենքում իրենց պատկանող անշարժ գույքերի տեսքով, ընդ որում՝ Հայաստանի Հանրապետության ներդրման չափը կկազմի 4 161 260 000 (չորս միլիարդ հարյուր վաթսունմեկ միլիոն երկու հարյուր վաթսուն հազար) դրամ (ներդրվող անշարժ գույքի (վկայական՝ N 03032022-01-0029) գնահատված շուկայական արժեք), իսկ «Հայփոստ» ՓԲԸ-ի ներդրման չափը կկազմի 6 788 000 000 (վեց միլիարդ յոթ հարյուր ութսունութ միլիոն, առանց ավելացված արժեքի հարկի) դրամ (ներդրվող անշարժ գույքի (վկայական՝ N15122021-01-0282) գնահատված շուկայական արժեք).

2) ընկերության կանոնադրական կապիտալում հասարակ (սովորական) բաժնետոմսերը կբաշխվեն բաժնետերերի միջև հետևյալ համամասնությամբ՝

ա. Հայաստանի Հանրապետություն՝ 19.82 %,

բ. «Հայփոստ» ՓԲԸ՝ 30.18 %,

գ. ներդրող՝ 50 %:

4. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը՝

1) լիազորել ընկերության հիմնադրման գործընթացում հանդես գալ Հայաստանի Հանրապետության անունից և իրականացնել «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-12-րդ հոդվածներով սահմանված հիմնադրի իրավասությունները.

2) վերապահել ընկերության հիմնադրման արդյունքում Հայաստանի Հանրապետությանը պատկանող բաժնետոմսերի կառավարման իրավասությունը.

3) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում ծրագրի իրականացման նպատակով ընկերության հետ համատեղ մշակել և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ընթացակարգով նախաձեռնել քաղ. Երևան, Սարյան և քաղ. Երևան, Պարոնյան փողոցների միջև (Սարյան 22 հասցեում գտնվող գույքին հարակից)՝ մինչև 12 000 քառ. մ մակերեսով հողամասը պետության կարիքների համար բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու գործընթաց:

5. Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը՝ սույն որոշմամբ և սույն որոշման հավելվածով նախատեսված պայմանների կենսագործումն ապահովելու նպատակով իրականացնել «Հայփոստ» ՓԲԸ-ի բաժնետոմսերի կառավարման հետ կապված անհրաժեշտ գործողությունները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

08.09.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ